ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Թորոսյան,

Ի պատասխան Ձեր 27.07.2026թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևան քաղաքի կանաչ տնկարկներում, չնայած կանաչապատման աշխատանքների գերծանրաբեռնվածությանը, մայրաքաղաքի վարչական շրջանների ստորաբաժանման դենդրոլոգները մշտապես իրականացնում են շրջայցեր, տեղատեսություններ, որոնց արդյունքում չորացած, տապալման վտանգ ունեցող, կենսունակության ավարտին մոտ գտնվող, դեֆորմացված, թեքված, վթարային տարբեր տեսակի ծառերի համար սահմանված կարգով կազմվում են ծառահատման տոմսեր և դրանց հաստատումից հետո, ըստ առաջնահերթության և ըստ վտանգավորության աստիճանի, իրականացվում են այդ ծառերի հատման աշխատանքները:

Հարկ է նշել, որ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից կազմվել և հաստատվել է.

- 2020 թ.՝ 814 ծառահատման տոմս,
- 2021 թ.՝ 1317 ծառահատման տոմս,
- 2022 թ.՝ 1462 ծառահատման տոմս,
- 2023 թ.՝ 1128 ծառահատման տոմս,
- 2024 թ.՝ 1704 ծառահատման տոմս,
- 2025 թ.՝ 1684 ծառահատման տոմս,
- 2026 թ. մինչ օրս՝ ավելի քան 1000 ծառահատման տոմս:

Միաժամանակ տեղեկացվում է, որ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից իրականացրած մոնիթորինգի համաձայն՝ վերջին 3-4 տարիների ընթացքում Երևանի կանաչ տնկարկներում նկատվում է ծառերի տապալման դեպքերի նվազման միտում: Մայրաքաղաքում խնդրահարույց ծառերի գույքագրման աշխատանքները կրում են շարունակական բնույթ և վերահսկվում են ՀՈԱԿ-ի գլխավոր դենդրոլոգի կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ